Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «Հովտաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (6 դասաժամ) ուսուցիչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև1), մեկ լուսանկար՝ 3X4 չափսի,
2. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ(դիպլոմ),
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5. Ինքնակենսագրություն(Ձև 5),
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9^{00} –ից 15^{00}-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. նոյեմբերի 8-ին՝ ժամը 14:30-ին**, Հովտաշենի հիմնական դպրոցում, հասցե՝ Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Հովտաշեն, փողոց 7 շենք 9: Տեղեկությունների համար զանգահարել 098 32 12 00 հեռախոսահամարով: